

Թիւ 25786
Ապրիլ 6, 1978

Արժանաշնորհ
Տ. Տիրան ԲԻՆՅ. Փափագեան
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ
Նախագահ Ժխական Խորհուրդի
Գլխավէնտ.

Սիրելի Տէր Տիրան,

Ստացած ենք Մարտ 28, 1978 թուակիր ձեր բացատրագիրը: Նման անպատեհու-
թեանց առաջքը առնելու համար՝ Եկեղեցւոյ նոր անդամներուն տրուած ստացական-
ները պէտք է կրեն անդամակցութեան սկզբնաւորութեան թուականը:

Այսու զիրով կը վաւերացնենք համայնքիդ ծխական ժողովին ընթացքին կատար-
ւած ծխական Խորհուրդի երեք անդամներու ընտրութիւնը, ըստ ստորեւ տրուած
ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդիդ նորընտիր Գիւանի
անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդիդ նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն
կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն
Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուր-
դին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵԳԻՍԿՈԳՈՍ
Առաջնորդ

Սեմ Միրաքեան
Տէյվիտ Անտոնեան
Գրիգոր Ղազարեան